

## ԵՄ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

( Շաբաթական Արքունիք Դեկտեմբեր 10-ի 1883 թ.)

Հին զպրոցները իւրիանց նշանաբան ունեն երկու սրբազործուած խօսքեր, մինչ՝ սուբր Գրքից, որէ. «օրհնեալ է փայտ, որով մինի արդարութիւն» բոլորովին այլափոխած խմաստով. և միւսը ժողովրդի բերանից առած, որէ, «ով ծեծ չուտի՞ մարդ չի գառնալ»: Հին զպրոցի ուսուցիչների պիտաւոր ջանքն էր աշակերտաներին մոլորիցնել այնպիսի խաւար լարիւթիւնը և թէ իրանք, առանց նոցա մի բան հասկացնելու, որ թէ հասարակութիւնը և թէ իրանք, աշակերտաները ոչինչ չըհասկանալով, զարմանային ուսուցի խորիմաստութեան վիրայ: Վլեբոանզրապօլի և այլ զաւառական քաղաքների ու զեղերի վերաբերութեամբ զիս բոլորովին չէ անցել այդ ժամանակը՝ թէպէտ խալֆայ բառը այժմ մի հեգնական խօսքէ, բայց զեռկան մարզիկ, որ յարգանօք են յիշում այն ժամանակի ուսումնական զրեանքը, թէ այժմ մինչեւ անգամ մեր զպրոցների թանզարաններում անարժան են համարում պահել, բայց մասնաւոր զպրոցների անընտրողութիւնը վատթարագոյն էս է:

Որպէս զի մեր ապագայ սերունդը զիտենայ թէ որպիսի յեղափոխութիւն է մասել մեր զպրոցական կեանքի մէջ և ինչպէս արագ, խորհուրդ կրտայի մեր զպրոցների վարչութիւններին, հին զպրոցական պատճի գործիքների համար թանզարանի կամ զրադարանի մէջ մի մասն յատկացնել և այդ մասին աշակերտաներին շուտ շուտ այցելել տալ. խորհուրդ կրտայի թեմական տեսուչներին, մասնաւանդ մեր յայտնի ժողովրդական վիպասան Պ. Պաօշեանին, որ իւր պաշտօնով շատ այլպիսի զպրոցներ է տեսել և իւր մանկութիւնը զոյա մէջ անցրել իբրև աշակերտ և վարժապետ, մի յատուկ վիպասանութեան նիւթ զարձնէին: Վլեբոանզրապօլի ծերունիները՝ նոյն զպրոցի աշակերտ ու վարժապետներն են, զործողները՝ աշակերտաները, իսկ ապագայ սերունդը՝ բացառութեամբ մասնաւոր զպրոցների կրթվում են բարեկարգ և ամեն յարմարութիւն ունեցող զպրոցներում: Ես ուղղակի այժմեան մասնաւոր զպրոցները չկարազրեցի, որ զործող անձինքը շատ չպայթաւան, բայց թող այդպիսիքը բարեհամբն հանգարտութեամբ իւրիանց պատկերը նկարագրածի մէջ տեսնել, որպէ-

հետեւ այլպիս են երեսում ուրիշներին։ Առարկողներ կը լինին անշուշտ այլպիսի դպրոցները վակել բոլորովին, բայց զոցա աշակերտներին ուր տեղաւորել գողոցներում թափառելը զանազան գոյթական գործեր տիմնելով՝ աւելի վտանգաւոր է։ Կերկուց չորեաց փոքրագոյնն է ընտրելի։ միայն չարկիք չարեք է, հարկաւոր է, տեսնելը զիտանալ և աշխատել հետ զհետեւ առաջըք առնել։

Եյդ չարկիք առաջըք կարելի է առնել, օրինաւոր ծխականների թիւը շատացնելով։ Եյլպիսի ծխականներ պետք է հասաւատել ։ Աստուածածնի աւագ եկեղեցու, ։ Աշանի, անշապարների եկեղեցու մասնում՝ ուր Գհեօնջեանի գոլոցն է, ապա թէ ու՝ անշնար է ժողովրդիան մասւոր զարգացման ձգարմանը բաւականութիւն տալ միայն վիճակային դպրոցով, որի մէջ այժմ էլ 197 աշակերտներ սովորում են զետեղուած հետեւալ կարգով։ Դ., զասարանում՝ 11 աշակերտ, Գ., զասարանում՝ 16 աշակերտ, Ի., զասարանում՝ 33 աշակերտ, Ե., զասարանում՝ 65 աշակերտ, Գ., պատրաստականի Ե., բաժնում՝ 48 աշակերտ, Գ., պատրաստականի Ե., բաժնում՝ 45 աշակերտ, Ի., պատրաստականի ըրս բաժնուներում՝ 177 աշակերտ, Ե., պատրաստականի երկու բաժնուներում՝ 102 աշակերտ, որովհետեւ նսրակառոց դպրոցը իւր մէջ չէր տեղաւորել բոլոր պատրաստականները, հոգաբարձութիւնը պարտաւորուեց մասներ ունենալ երկու առանձին տեղերում, որոնք վիճակային դպրոցից հետի են մինը կես վերսա՞ իսկ միւսը 5/4 վերսա՞ որ մեծ անյարմարութիւն է թէ աշակերտների և թէ ուսուցիչների համար, որոնք պարտաւորուած են մի տեղից միւսը զնալու համար ցիսէ լծերը անցնել, խորհուրդ կը տայի հայկական հանձարը գործ զնել մի զիւտ հնարել այդ ցիսէ լծերի վերայ ձանառլար հորդերու, և թէ բոլոր եղած միջոցները անդո՛հացուցիչ են, որով պատուած կը լինին բնակիչքը երթեւեկութեան անտանելիութիւնից։

Զուտ հայոց դպրոց օրինաւոր ծրագրով ու մանկավարժութեան հիմունքներով կառ ավարուող Եղեքսանդրապօլում երկու հատ աղայոցն է, մինը վիճակայինը իբրև միջնակարդ, իսկ միւսը՝ սուրբ Նշանի ծխական Գհեօնջեանի դպրոցը իբրև տարրական։ Արկու հատ էլ աղջկերտանցը, Եղկութեան՝ միջնակարդ և Աահականուշեան՝ տարրական։

Արձակային դպրոցը ըրս զասարաններից և երեք զանազան աստիճանի պատրաստականներից է բաղկացած, իսկ Երդութեանը՝ եր-

կու պատրաստականից և երեք դաստրաններից։ Վիճակային և Արդգութեան զպրոցներում վարժապետները վարձատրվում են ըստ արժանույն, իսկ Սահմանուշեան զպրոցը կառավարվում է մի քանի վարժապետների ձրի դաստաւանդութեամբ։ Խեղէտ այդ զպրոցում էլ կան սոճկաւոր ծառայողներ։

Վրդութեան և վիճակային զպրոցները կառավարվում են ժողովրդից ընտրուած հոգաբարձուներով, Սահմանուշեանը՝ ուսուցչաց խմբի վարչութեամբ, որ միայն զանձապետ ունի քաղաքացիներից, իսկ ո. Նշանի Գոհոնջեան զպրոցը կառավարվումէ միմիայն ուսուցիչների վարչութեամբ, որոնք թէ տնտեսական և թէ ուսումնական մասը իւրեանց վիրայ ունին։

Ենցեալ տարուայ պաշտօնական ցուցակներից հետեւեալ տեղեկութիւնները կարելի ե. քաղել Եղեքսանդրապօլու զպրոցների մասին։

Անուանք Դպրոցաց	Թիւ աշուկ.	Աւ- սուց.	Վարչութիւն	Մուտք
Վիճակային Հոգեւոր դպրոց ի նիւդ դաստ- րանց,	360	11	Հոգաբարձութիւն ի 6 անժանց,	Վարձագրամք կրակաց, թոշակագրամք, արդիւնք ի պատկերէ Ս. Աստուա- ծածնի.
Նիստիան դպրոց ազգայց,	258	8	Կառավարի ի ձե- սըն վարժապետ,	Թոշակ աշակերաց.
Գումար	618	19		
Արդամնան դպրոց օրի- որդաց,	133	16	Հոգաբարձութիւն ի 4 անժանց,	Արտեկեալ գումար էշխան Վահրամանի Արդութեան, կրտպակապարձք եւ թոշակ
Միամարդան դպրոց օրի- որդաց,	186	7	Կառավարի ի մեռն ուսուցչաց,	Թոշակ աշակերաց,
Գումար	339	23		
	618	19		
Համագումար Թիւ	339	23		
	957	42		

Տեսուչը եղել է Աստրասրուրդի համարարանի գոկտօր, ուսու-  
ցիչներից մինը՝ Առուկվայի կայսերական համարարանի կանողիդատ,  
մինը՝ զիմեազիայի ուսումնաւարտ, մինը՝ Վազարեան ձեմարանի ու-  
սումնաւարտ, մնացեալները՝ Ներսիսեան զպրոցի գումառական ար-  
քունի զպրոցների և նոյն ինքն Եղեքսանդրապօլու զպրոցի սաներ։  
Բացի ծխականներից կամ մասնաւորներից, ի յարգանու, պէտք է

ասել, որ Ալեքսանդրապօլու գլուխցների ուսուցչաց խռոմիլը լաւ անձինքներից է կազմուած, և շատերը յայտնի են իւրեանց մանկավարժական զրուածքներով։ Բացի Գհօնջեանի զպրոցը, որի ուսուցիչներից մինը ուսել է Տփիսիսու վարժապետանոցում, իսկ միւսը Ա. Խջմիածնի ճեմարանում (միշտ՝ Պ. զասարսնը), և բացի Ասէականուշեան օրիորդական զպրոցից՝ որ կառավարվումէ Վըզութեան և վիճակային զպրոցների ուսուցիչների ձրի դաստիարակութեամբ, մասցեալ մասնաւորները հին խովհանականէ կատարեալ տիսպն են։

Իւացի վերև յիշուած դպրոցներից՝ հայ մանուկները սովորումները գաւառական դպրոցում և Երաբաղջեանց եղբայրների ուսումնարաններում, Արքունի օրիորդական պրօգիմնազիայում՝ և այլ մանր մունք յայտնի և անյայտ պատճախներում։ Որոնց թիւը 400 հաշուելով՝ մօտաւորապէս, կստանաք ընդամենը 1357, որ շատ անհարաժեշտ թիւ է շատակեր և բազմածնունդ Ծիրակացի Ալեքսանդրապօլ քաղաքին նայելով, ուր, ինչպէս հոգեւոր կառավարութեան վիճակազրութիւնը ցոյց է տալիս՝ 3046 տուն և այ ժողովութիւնը կայ, թողլով և այ—Կախովիները։

Իսորոր տասն և մին գործակալութեան մ.ջ , մեծ Վարպետիլիայի երկիւա գովրոցները միասին հաշուելով (բաց ի Ալեքսանդրապոլ քաղաքինը) 29 գորոց , որոնցից մինը օրիորդոց՝ 25 աշակերտներով . 13 գովրոցներում գասաւանդութիւն չէ եղել , ուրեմն ամրող Ալեքսանդրապոլում անցեալ 18<sup>80/81</sup> ուստի մնական շրջանում եղել են գովրոց , աղիւսակի համագումար թուերը :

Վարժապեաներից 44ը արական են , 13ը իզական : Այս ուսուցիչները ուսել են ընդհանրապէս մինք՝ արտաստհմանի համալսարանում , մինք՝ տէրութեան , իսկ մնացեալները՝ զիմնադիայում , Պօդիմնագիայում , գաւառական գովրոցներում , Ա. Էջմիածնի Ճեմարանում , Աերսիսեան գովրոցում , Ալեքսանդրապոլի վիճակային գովրոցում , Արգութեան օրիորդական գովրոցում . և շառիձում : Ապղոցներից վիճակայինը բազկացած է չորս գասարաններից և երեք տարեշրջան պատրաստականներից . Արգութեանը՝ երկու գասարաններից և երկու տարեշրջան պատրաստականներից . Ասհականուշեան օրիորդականը՝ մի գասարանից և երկու տարեշրջան պատրաստականներից , մնացեալներից 12 գովրոցները երկգասարանների են , իսկ 15ը մի գասարանների նախակրթարան : Արդէն յայտնի է , որ այդ գովրոցները կառավարվումեն եկեղեցական արդիւնքներով , զանազան նուելքներով և աշակերտների թոշակաղբամներով : Երկու կինզրօնական գովրոցներ կան , որոնք կառավարվումն հիմնադիր համարուած պ. Վ. Ա. ազնիւ շայու օժանդակութեամբ և աեղական ժողովրդի տուբքերով :

Այս ասրի , որ ասիթ ունեցայ Ալեքսանդրապոլու գովրոցների քննութեան ներկայ լինելու և կոչմամբս պատեհութիւն ունիմ յաճախ ուսումնարաններին այցելելու , խոստովանում եմ , որ առարկաները ընտրանօք և չողածութեամբ են մատակարարվում . ուսուցիչները , որոնցից շատերը տարիներով արդէն նոյն գովրոցում ծառայելով թէ աշակերտների և թէ հասարակութեան համակրութեանն արժանացած են , և անխոնջ եռանդով են իւրեանց պարտականութենը կատարում . սոցա գործունեութեան վերայ անցեալ տարի հսկելիս է եղել մի նոյնչափ արժանաւոր անձն Տեսուչ Պ. Ա. Յ. մասնաւորապէս , և ուսուցչական ժողովը ընդհանրապէս :

Պետք է ասել որ , ներկայ հողարարձութեանց ջանքը ոչ սակաւ գնահատութեան արժանի է , որոնք գովրոցների գործերը իւրեանց սեպհական գործերից եթէ զեր չեն դատում , զոնէ հաւասար կար-

զումն են պահում : Աղել է ժամանակ, որ շաբաթուայ մէջ համարեա ամենայն օր Հոգաբարձական ժողով է եղել, և ի յարգանս հոգաբարձուաց պէտք է տակ, որ զբեմէ ամենքը ներկայ են եղել ժողովներին, Աերջին աստիճանի ժողովրդականութիւն է տիրում ազգային զործերը միայն ժողովրդան կարող է օգուտ տալ և կամ պնաւել, և հասարակութիւնը այդ զործերի զեկը ամենայն արդարութեամբ յանձնել է վերին աստիճանի ժողովրդական մարզիկներին : Եյսպէս որ, այժմեան հոգաբարձութիւնը կազմուած է միջին դասին պատկանող վաճառական անձններներից, որոնք միշտ հեռի են պահում իրանց աւելորդ շաղակիրատութիւններից, մանկավարժութեան վերաբերեալ վրուն նախադասութիւններով ճռճռան ճոռոմարանութիւններից, որոնցից զրական օգուտ չկայ զպրոցների համար, այլ իրրե վաճառական մարզիկ միշտ նիւթականը ի նիստի ունելով, այդ մասին են հոգում, ուսումնական մասը ժողովներով ուսուցչական ժողովին, որ շաբաթը մի անգամ պարտաւորուած է գումարուել :

Հոգաբարձութեան շրջանը լրացել է, և մօտիկ տպագյի ընտրութիւնը ցոյց կտայ Ելեքսանզրապօլցու յատկութիւնը :

Հասարակական մաքերի արտայայտութեան տեղերն են, բարձր շրջանի համար՝ ժողովարանը (կլուբը), միջին դասակարդի համար՝ հրապարակի խանութները, ուր իրանք տուրեատութիւն են կատարում . միջին դասից ոմանց և սաորին դասի համար սրճարանները . այդ տեղերում թէև պաշտօնական ժողովներ և պատրաստական ճառախոսներ չկան, սակայն արհեստաւոր զասը հաւաքութելով՝ ամեն մինը իւր կարծիքը յայտնելու համար պատրաստական ճառախոս է առանց հաղալու՝ թեկին ու օձիքը զրսակու և երին ու ձեռքերը շփելու :

Ելեքսանզրապօլը իւր տեղական հանգամաներների շնորհիւ երկու արհեստների մէջ բաւական հմտութիւն է սաւացել, և զոքա են ճարտարապետութիւնը՝ քարաշէն շինութիւններ կառուցանելու և երկաթագործութիւնը : Կան նաև բաւական խառաջներ, սատայնանկութեամբ պարագողներ՝ որտանց արտազրութիւնն է այն նուրբ և սպիտակ

րուրդից զործուած կերպասը, որի մէջ փաթաթվումն կանայք և որ էնթամ է կոչվում:

Աղեքսանդրապօլու բնակիչքը բաղկացած են Երգրումցիներից, Ասրւեցիներից, Բայազէտցիներից, Բասենցիներից և տեղացիներից, զաղթականութեան այդ զանգուածը մի ծանր և զժուարալուր բարբառի արտասանութիւն ունի, մանաւանդ երր խօսումնն Բայազէտցիները: Այժմեան դպրոցները ուր ընդունած է Երեանի բարբառը, մհծայոյս և՛ որ կարող կիմնին ժամանակին մի ախորժալուր և հեշտ բարբառով խօսող սանիկներ ընծայել հասարակութեան, և աւելի բարեկիրթ:

( Եաբանակիւլ ) .

Յ Ա Մ Ա Ն

Գ Ր Ա Ք Ն Ե Ա Կ Ա Ն

Արդարեւ զժբաղդութիւն մ' է թէպէտ, որ այս միջոցիս մեր ձեռքը հանող պարբերական գրուածոց մէջ, քննադատի մը ուշը գրաւող ուրիշ մի թերթ չգտնուի բաց ի Մշակէն, բայց ի՞նչ օգուտ որ՝ զժբաղդութիւն ասածդ մարդոյս կամքն ու հաւանութիւնն առնելով չէ որ կ'գայ, ուստի ինչ որ և լինի՝ կամայ ակամայ պարտաւորեալ եմք տանելու:

Մանաւանդ որ Մշակ, իւր № 46 թիւ թերթին առաջնորդող յօդուածոյն մէջ, մեր ազգի մանկանց համար հրատարակեալ գրեանց որակութեանը վրայ խօսելով, կ'ըսէ թէ՝ ի բաց թողլով այդ տեսակ գրեանց անձունի ընտրութիւնն նիւթի կողմանէ, լեզուն իսկ այնքան այլանդակ է՝ որ երբէք հայերէն չէ կարելի համարել, այլ Հոռորեալ +---- Տէ է լի օդար Դ-Շ-Ն-Ե-Ր-Վ-Ն մէ Լ-Բ-Է-Ր-Ի-Ն-Ի-Ն, որ մանուկը՝ փոխանակ լեզու ուսանելու՝ աւելի ևս կ'չփոթի և կ'մոլորուի:

Հետեարար Մշակ ինքն իսկ խօսուովանելով որ մեր այժմու հրապարակաց գլխաւոր մի պարտքն ևս է՝ ուշագրութիւն մեծ ընծայել որ իրենց զրուածոց լեզուն անձունի և օդար գարձուածներով և խառնուրդով կատարեալ +---- և Լ-Բ-Է-Ր-Ի-Ն-Ի-Ն մը լինելէ զերծ գտնուի, քանզի մանկանց համար գրուածներն բացառութիւն մը չեն կազմեր լեզուի մասին՝ հասակաւոր և խելահաս անձանց համար գրուածներէն, ուստի և մեր իսկ Մշակի լեզուին նկատմամբ բացած գրաքննական այս ճիւղը՝ մարդասիրական ծառապյութիւն մ' է Մշակի համար, որն որ փոխանակ վշտանալու՝ առաւել ևս պարտի շնորհակալ և երախտագէտ համարել պանձն: